

## Գրականության դասի նմուշ օրինակ /7-րդ դասարան/

Դասի թեման՝ Հովհ. Շիրազի «Թագադրում» բանաստեղծությունը

Դասի նպատակը՝

ա.բանավոր խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում

բ.արտահայտիչ ընթերցանություն

գ.բանաստեղծության թեմայի և բովանդակության ընկալում

դ.բանաստեղծության պատկերային և լեզվառճական համակարգի առանձնահատկությունների բացահայտում և մեկնաբանում

Դասի ընթացքը՝

Խթանման փուլում ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է մտածել և պատասխանել, թե ինչ է իրենց պատկերացմամբ երջանկությունը: Լսելով աշակերտների կարծիքները՝ ուսուցիչը առաջարկում է կարդալ Հովհ. Շիրազի «Թագադրում» բանաստեղծությունը և իմանալ բանաստեղծի պատկերացումները երջանկության մասին:

Իմաստի ընկալման փուլ՝

Ուսուցիչը ընթերցում է բանաստեղծությունը, տալիս է անձանոթ բառերի / ծիրանի, հրովարտակ, ցնծալ/ բացատրությունները, անդրադառնում է հետևյալ հարցերին.

ա.Թեման - Բնություն, զարուն, զարթոնք

բ.Գաղափարական բովանդակությունը - Մարդու և բնության փոխադարձ կապը, հավերժի և կատարյալի մշտնջենական ձգտումը, մարդու երջանիկ լինելու գաղտնիքը

գ.Կառուցվածքը՝

-Տների բաժանված չէ, որովհետև հույզը, զգացմունքը այնքան շատ են, որ բանաստեղծը այն ասես գրած լինի մեկ շնչով, առանց դադարների. խոսքը հորդում է զարնան վարար գետի նման:

-Հանգավորումը՝ խաչաձև

-Պատկերավորման միջոցները՝ բազմաշաղկապություն/ որ շաղկապով սկսվող տողեր/, անձնավորում / հոգիս արթնացավ, ինձ է դուրս կանչում զեփյուռը, ձյունը լալիս է դաշտերի վրա .../, մակդիր, փոխաբերություն, համեմատություն

Կշռադատման փուլ՝

Աշակերտներին հանձնարարվում է բանաստեղծությունը վերածել արձակ շարադրանքի, կազմել քառաբաժան՝ հետևյալ բաժանումներով. ի՞նչ տեսա, ի՞նչ զգացի, ի՞նչ հիշեցրեց, նոր վերնագիր:

Տնային հանձնարարություն՝ Դասն արտահայտիչ ընթերցել, կազմել հետևյալ բառերի հոմանիշային շարքերը՝ զեփյուռ, ջահել, կապույտ, հավերժ, բեկվել, դուրս գրել առանցքային բառեր / օր՝ արև, գահ, թագ, զարուն, երջանկություն / և կազմել հնգյակ